

ԵՆԵՐԵՑԻՔ

Վ. ԵՐԵՐԸ ԵՊԵՏ ՅԱՎԴԱԲԻ

(ՅՈՒՆԻԿԱՆ ԲՈՒԺԱԿ)

Գ. ԵՀԵՂԵՑԻ ԱՐԵՐՈՅՆ ԳՏԱՅՔԱՆԵԱՅ.

ԳՏԱՅՔԱՆԵԱՅ սրբոյ կուսի վկայարանը, զոր շնորհին սուրբ Լուսաւորիչն մեր Գրեթիգոր և Տրդատ՝ էր Վաղարշապատ քաղաքի հարաւային կողմը արտաքոյ հարաւային զրանն, սրբոյ կուսի նահատակութեան իսկ տեղը, որոց վերայ տեսաւ Ա. Գրիգոր երեք լուսեղէն խարիններէն մէկը, ուր և ամփոփեցին սուրբ նահատակի մարմինը և նորա հետ եղած երկու ընկերացն յ301 թուականին Քրիստոսի: Եյս շնորհիւնը ևս թէ ի՞նչ ձե էր՝ որպէս և Հռիփոփիմեայ վանքի տռաջին շինութիւնն ի Լուսաւորչէն, Եգաթանգեղոս ժամանակից ժամանակականից պատմին յայտնի չէ դրել. ուստի եկեղեցեաց յետագայ ժամանակի շնորհիւններէն կհասկացուի որ Լուսաւորչի և Տրդատաց շնուածները՝ մատուռներն են վկայարան նոցտ մարմնոց հանգստեան՝ և ոչ հոյակապ եկեղեցիք:

Մինչեւ եօթներորդ դարը սրբոյն Գտայինեայ վկայարանը ևս յամայութեան մէջ էր Հռիփոփիմեայ վանքի հետ. ուստի և Կոմիտաս Կաթողիկոսէն ետքը, որ Հռիփոփիմեայ եկեղեցին շնորհ, 618 փըրկշական թուին, Եզր Կաթուղիկոս 630 թուին սրբոյն ԳՏԱՅՔԱՆԵԱՅ վկայարանի նաևմ և մթին շնորհ քակելով, շնորհ ընդարձակ և հոյակապ կոփածոյ քարով՝ վայելու և Կաթուղիկեիւ, և ինչպէս կերեի, արտաքուստ պարսպելով զայն պատրաստեց տեղի բնակութեան հոգեօր պաշ-

տօնէից իսպանաւորութիւն աստուածամին խորանին ըստ վկայութեան Յովհաննէս Օքդ Կաթուղիկոսի՝ ըստ այսմ:

“Տսկ ապա Հայրապեան Եզր զվկայարան սրբոյն ԳՏԱՅՔԱՆԵԱՅ՝ զոր երբեմն խըրթին և մթին էր շնուալ, քակեալ զայն, ևս ընդարձակագոյն և պայծաւագոյն զնաշնորհ կոփածոյ քարամբք և կրով ձուլելով, և արտաքուստ յարդարէր կայանս բնակութեան քահանայական գասուց ի պաշտօն աստուածամին խորանին, :

Սորանից ետքը ԳՏԱՅՔԱՆԵԻ գանքը ևս մնաց անինամ և ամայի մինչեւ պարսից երեսէն երկրի խաղաղանալը. երբ որ Փիլիպպոս Կաթուղիկոս Հռիփոփիմեայ վանքի նորոգութենէն յառաջ՝ 1652 թուիննորոգեց ԳՏԱՅՔԱՆԵԱՅ տաճարը զրեմէ բռնըրովին, և Կաթուղիկոս բովանդակ, ըստ որում բոլորովին քայքայուած էր տանիքը, և կաթուղիկէն խոնարհուծ, միայն չորս որմունքն և չորս սիւները կանգուն կմնային, և այն՝ տեղ տեղ ծակոտուած և խրամատեալ. զորոնք Փիլիպպոս Կաթուղիկոս մեծ ջանքով և մեծ ծախուլ նորոգեց կոփածոյ քարով ի հիմանց մինչեւ գմբէթը. որոյ վերայ և հասաաանց նըշան տէրունական խաչին, ինչպէս Եռաքել պատմագիրն կվկայէ:

“Եայց սրբոյն ԳՏԱՅՔԱՆԵԱՅ կուսի տառարն առաւել աւերեալ էր. զի տանիքն բովանդակ իջեալ էր. միայն շուրջանակի որմունքն և չորեք սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց, և յատակ որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ. որոց աւրար նորոգման սկիզբըն Կաթուղիկոսն տէր Փիլիպպոս մեծահղձ կարօտիւ. և ջանիւ. և զբազում գանձս ծախելով, նորոգեաց

զեղեցկաշէն ի հիմանց մինչև ցդադաթ գմբեթին, յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին,, :

Փիլիպաս Աաթուղիկոսի արած այս նորոգութիւնն սուրբ Գայիանեայ վանից՝ եղի Փրկչուկան 1652 թուին, և Հայոց ՈՒՃՇ, որում գործավար և վերակացու կարգած է Յովհաննէս արեգայոմն, գործունեայ և արդիւնաւոր մարդ, որ Եռաքել պատմազրի վկայութեան նայելով, առարակուսելով թէ սուրբ կուսի նշխարօք անդ է թէ ոչ, որովհեակ մատուռը բուլորովին աւերուած էր, բեմի հետ՝ որոյ վերայ շննած էր, առանձին ժամանակ կրանայ սուրբ կուսին գերեզմանը, և հաստատութեան համար մասն մի ի նշխարացն առնլով, վերստին կամրացնէ զտեզին. այլ մեք ըստ որում սրբոց կուսանաց պատմութիւնը չենք գրում, այս պատճառաւ ինչպէս սրբուհոյն Հռիփումեայ նշխարաց, նոյնպէս և սրբոյն Գայիանեայ կթողունք ի բաց, որ արտաքոյ են եկեղեցեաց պատմական սառրազրութենէն:

Երեսուն տարի Փիլիպոսէն եաքը Եշղեազար Աաթուղիկոս գառնալով յեշմածին, Եթուոյ մէջ արած մեծամեծ շինութեանց հետ՝ սուրբ Գայիանեայ վանիքին շինեց վայելու գաւիթ՝ կից Եկեղեցւոյն արևմտից. երկու կողմից ևս երկայնեալ քան տաճարի լոյնութիւնը, և այս երկայնութեան հիւսիսային և հարաւային կողմերում յարգարեց փոքրիկ սեղաններ սրբոյն Պետոսի և Պօղոսի անուամբ, փոքր կ զանդականներով. քառակուրի պատսպարեց վանքը, և հոգեորականաց բնակութեանց համար՝ կանգնեց հարկաւոր շինութիւնք և հաս-

տատեց միարանութիւն տնդ, ինչպէս զըրուած է արձանազրի միջ՝ որ տաճարի արեւմտեան գրան ճակատի վրայ ի ներքոյ նորաշէն գաւթին:

Եյն ժամանակին սկսեալ շարունակ կը նստեր վանահայր Գայիանեայ վանքում. և ինչպէս որ զրեցինք Հռիփումեայ վանիքի համար, նոյնպէս և Գայիանէի վանահարը Պարսից ժամանակին Եթուուն կը տանէին հաւասար օրական հաց և տարեկան հանդերձ, ըստ որում ուրիշ միշտոց չունէին կառավարութեան:

Պատերազմէն եաքը՝ որոշեցաւ այս եւրեք վանքերի համար ևս վարելահող և տրուեցաւ նոցա յԵթուույն լծկան և կիթի անառունքը: Եյն միջոցին ևս Տփխիսեցի ոնն Գոզի անուն՝ որ երկար ժամանակ յԵթուուկծառայէր, յիշատակ թողուց Գայիանէի վանքին մէկ մեծագիր այգի, զորիւր արդեամբք շինեց, և իւր ծախսովը հասոց ի պաղատառութիւն:

Եկեղեցին է երկար քառանկիննի, բարձր՝ հոյսկապ կաթուղիկէիւ չորս սեան վերայ, ունի երեք գուռն և մեծամեծ լուսամուտներ. տաճարի հիւսիսային դռուը և քանի մի կողմանակ ան լուսամուտներ փակուած էին յառաջագոյն, և արտաքուստ ի աեղիս տեղիս խախտուած որմունքը:

Երկայ ժամանակումն Տփխիսեցի Եշղիս բաստամեանց ուսումնական երիտաւսարդը Լաղարեանց Ճեմարանի աշակերւտութիւնէն Մոսկուայի կայսերական Համալսարանում իրաւութանական գիտութեան ուսումն աւարտելով (կանգիստակ կրչումնվ) եկաւ սուրբ Եթուու Եշղմիածին, ուր յարատելով միք երկու տորի,

ապա ըստ իւր ցանկութեան և բարեհաւա-
ճութեամբ Աւեհափառ Կաթուղիկոսի
ձեռնազրությով Միաբան Ա. Գայիանեայ
վանից, կոչեցաւ Աւահան վարդապետ, և
կարգուելով յիշեալ Աւանքին վանահայր
1872 թուականին, բոլոր եկեղեցին ներ-
քուստ և արտաքուստ վայելչապէս զար-
դարեց իրեն տարեկան նշանակած մնջն-
դադրամովնե և նուիրատուութեամբ ժո-
ղովրդոց, որմոց խախտուածները նորոգեց.
Հիւսիսային դուռը և փակած լուսամուտ-
ները բանալով, բոլորը ևս մեծացրուց ի-
պայծառութիւն տաճարին:

Խակ Եկեղեցւոյ արևմտեան ճակատը
փակող հին սենեակները քափեց, որք հիւ-
սիսից հարաւ երկարացած իրեւ ներքին
պարիսպ կձեւանային և գաւթի տեսքը կը-
փակէին արտաքուստ, տաճարի արևմտեան
դրան հանդէպ, ուղղաձիգ և լայն ճանա-
պարհ բանալով, պարսպի մեծ դուռը դի-
մոցէ դիմաց կանգնեց նոր ի նորոյ կամա-
րայարկ, որ յառաջ փոքր ինչ վերէր դէպ
ի հիւսիս:

Հին սենեակների հարաւային ծայրն ե-
ղած ներքնատան վերայ շինեց նոր և գե-
ղեցիկ սենեակներ բնակութեան համար մեծ
բուսամուտներով և արձակ պատշգամի
կանգնելով յարե ելից, ընդ որ դրան մուտ-
քըն է, սենեկաց մէջ պատրաստելով և
փոքրիկ դպրոց, ուր կուսանին Հայերէն և
Առուսաց լի զու ըստ մեծի մասին Աւաղար-
շատատումն եղած քաղաքական ատենից
մէջ ծառայողաց որդիք:

Հիւսիսային բաժնում ևս կառուցել է
արգէն նոր սենեակների հանդէպ երկու
երես մեծադիր շնուրածք չե ևս ծած-
կուած, որոց մէջ պէտք է լինին վանքի այլ

հարկաւորութեանց համար զանազան
սենեակներ և ապազրատուն, որոյ համար
բերած է Աւահան վարդապետ մի հաս
տպազրութեան մամուլ, որով կտպազրէ
արդէն Գալրոց Ամսագիրը. որում կը-
մարթեմք յԱստուծոյ և ևս արիսթիւն և
յաջողութիւն՝ որ ուրիշ վանօրէից և
վանահարց օրինակ կլինի թէ տպարանի
հաստատութեամբ, և թէ ամենայն շինու-
թեամբ և բարեվայելչութեամբ պայծա-
ռացնելով զուրբ Գայիանեայ վանք շը-
նորհիւ Աւեհափառ Հայրապետին մերոյ:

Դ. Շողակաթ անուանեալ Եկեղեցն ակա-
կանէն. 1).

Արբոյն Գրիգորի և Տրդատայ շինած
վկայարանների մին ևս էր “Ի տեղուց
հնձանին,” ուր սուրբ կուսանացն Ար-
քական երեք լուսեղէն խարսխաց մին անդ
իջած, Ազաթանգեղոսի վկայութեամբն
ըստ այսմ:

“Եւ նայեցայ և տեսանեմ այլ խա-
րիստ երիս, մի ի տեղուց ուր վկայեաց
սուրբն Գայիանէ երկու ընկերօքն. և մի
ի տեղուցն, ուր վկայեաց սուրբն Առիվ-
ոսինէ երեսուն երկու ընկերօքն, և մի ի
տեղուց Հնձանին,, . (Եր. 272.) որոց

(1) Ըստակաթ կանուանէր ըստ յառաջ բե-
րելց և Յով. Խպիսկոսոսի Ծաշիամունեան
Կաթուղիկէ Եկեղեցին Աւաղարշատատայ. խսկ
մենաւոր կուսի վկայարանը նախ քան այժմեան
հոյակապ Եկեղեցւոյ շինութիւնքը՝ ինչպէս կերեի
յառաջ բերած Արձանադրէն՝ Հնձանեաց մա-
տուռն կը կոչու էր. ուստի Եկեղեցւոյ շինութիւնէն
նաբը՝ կերեի սովորութիւն եղած Ըստակաթ ա-
նունը.

աեղը վկայարան կանգնելու համար և ո՞ կզբէ այսպէս. «Աանգնեալ երիս վկայարան» միի հիւսիսոյ արեւելից կողմանէ քառարին, ուր վկայեաց աանականն չուիփսիմէ երեսուն երկու ընկերօքն, և զիւսն շնիցին ի հարաւակողմն կուսէ անտի, ուր վկայեաց սուրբն Գայիանէ նորուն սնուցիւ երկու ընկերօք. և միւսն մօտ ի շնձանն ի մէջ այցւոյն, ուր էին վանք նոցա,,,: (Եր. 279:)

Եւ այս երրորդ վկայարանը կանգնեցաւ մենաւոր կուսի¹⁾ սպանման տեղը և մօտ ի շնձանն,,,: որ իւր հիւանդութիւնը իւր նահատակութեան ազօթից մէջը ցոյց կայ ըստ Ազաթանգեղոսի. «Գոհանամ զքէն Տէր բարերար, զի և զիս ո՞չ զրկեցեր, զի և ես հիւանդ էի, և ո՞չ կարացի ընթանալ և զհետ ընկերացն ժամանել,,,: (Եր. 69:)

Լուսաւորչու շնորհ վկայարանէն ետք՝ շնձանի վերայ կառուցաւ մատուռն հոյակապ և կովածոյ քարով, տաճար փոքրիկ, ըստ նորա Երձանագրին, ըստ այնու և Շինեցու շնձանից մատուռս ի թուին ՕՃ՝ եւ Գ. որոյ և աւելրակը մինչև ցարդ կմնայ ճանապարհի վերայ հանդերձ իւր շրջապատ աստիճաններով. միայն արձանագրի փոքրիկ խաչքարը՝ զետեղած են Երիդեցոյ պարսպի հիւսիսային արեւելտեան բրդան վերայ մարդաշափ բարձրութեամբ. ինչպէս կերեկի, մատուռը քա-

կուելին ետքը դրած են անդ վասն յիշատակի¹⁾:

Այժմեան հոյակապ փոքրիկ Երկեղեցւոյ շնորհիւնն եղած է Կահապետ Աաթուղեկոսի ժամանակին, որ շնորհ զայն արդեամբք Ծուոթեցի Ազամալ անուն իշխանին յամի 1694, կովածոյ քարով՝ անսիւն և վայելու Կաթուղեկեիւ չորս լուսամասով, և երկու դռնով արեւմտից և հարաւոյ կողմէն. որոյ հարաւային խորանի մէջն է մենաւոր կուսի տապանաքարը. և շնորհեան արձանագրին է աւրեմանեան դրան ճակատի վերայ վերողըրեալ թուականով:

Անի գաւիթ փոքրիկ զանգակատնով՝ արեւմտեան ճակատի լայնութեամբ. որոյ մէջ զրան հիւսիսային և հարաւային բաժնում ամփոփուած են Կահապետ և Արքաւացի Երբահամ Կաթուղեկոսաց մարմինը:

Այս շնորհեանց ժամանակ ընդարձակ քառակուսի պարսպով պատել են վանքը չորս բուրդերով. որոց հիւսիսաւ-

(1) Երձանի թուականը ԶՃ եւ Գ. տարակուտութեան մէջ հձգէ զընթեցողա օրովհետև չի որոշել փրկչական է եմէ Հայոց թուական. Ազգին սովորականին նայելով՝ ի հնումն հայ թուականն ի զործ կղնէին. ըստ այսմ եմէ առնունք զայն երկուտասաներորդ զարու մէջ զրուած, այն է ի 1154 թիւ փրկչին, յիշատակութիւն չեմք գտնել առ պատմագիրս՝ Հնձանեացս մատրան շենութեանը իսկ եմէ վերածեմք զայն ի փրկչական թիւ այսինքն ի 60Յ. և ո՞չ սցդ ժամանակ կյիշն պատմէք այդպիսի շնորհեան. միայն թէ սցդ թուականէն տասն և հինգ տարի ետքը՝ Կոմիտաս Կաթուղեկոս կշինէ Հարիփարմեայ վանքը ինչպէս նորա ստորագրութեան մէջ:

(4) Ազաթանգեղոս հիւանդ կուսին անուն չի նշանակեր բայց միայն մենաւորն է կզբէ որ ի շնձանին սպանաւ. (Եր. 283:) Աւստի այլ անուն ընծայել նմին հաւանական չի երեկի արտաքոյ պատմութեան.

յին արևմտեան բրդան վերայ է վերը գրած
արձանագրի փոքրիկ խաչքարը ճանապար-
հի վերայ՝ պարսպի կամարակապ դրան
մօա, որոյ ներքոյ և այժմ խոկ խաչ և Ա-
ւետարան կդնին ի համրոյք ժողովրդոց,
Օատկի Մեռելոց երկուշաբաթի օրը. ու-
րոնք դիւղովին կդան ի հասարակաց գե-
րեզմանատուն:

Պարսից ժամանակին Ծողակաթ նըս-
տող վանահարք բաւական շէն ու պայ-
ծառ կպահէին վանքը. Յուռշանինց ասա-
ցեալ Յակոբ եպիսկոպոսը, որ պատերազ-
մէն յառաջ և յետ, կնատէր վանահայր,
շնարար մարդ լինելով, իւր աշխատան-
քով շնեց մի մեծ այզի, և թէ՛ վանքը
և թէ պարսպի մէջն եղած պարտեզները
ամենակերպ վայելչութեամբ այնպէս էր
զարդարել, որոյ զանազան ծառոց պը-
տուղները՝ Կաթուղիկոսաց և Հիւրոց
կերթային ի վայելս:

Եյս ժամանակին ևս թէ՛ աստ և թէ՛ ի
Հռիփսիմէ կային քանի մի միաբան կար-
գաւորք յՆժոռոյն. որոց հաց և հան-
դերձ թէ և յՆժոռուէն էր, բայց այս վան-
քերը ևս ունէին առատութեամբ վար ու
ցանք և անասունք ոչ սակաւ, որով միա-
բանից ստելքը կպատրաստուէր:

Ե. Եկեղի սուրբ Գրիգոր առայշտա-
լուսադաշնին

Եյս Եկեղեցի սուրբ Գրիգոր կոչեցեալ
ընդ մէջն Եօթներորդ դարու յանուն
Երկնաւոր զուարթնոցն շինեց Եկեղի ս
Գ. Կաթուղիկոսն ազգին՝ հոյակապ և
դեղեցիկ շինուածովք ու զանազան փո-
րուածքներով, մինչև յետագայ պատ-

մէք զարմացուցիւ տեսողաց կանուա-
նէին:

Եկեղեցի ժամանակակից պատմիչն Ոեւ-
բէոս Եպիսկոպոս Բաղրատունիաց Փլրի-
չական 641 թուականին, որ նորա օրովք
Դվնաց Դ. ժողովքի մէջ զանուեց, այս
եկեղեցին յանուն Երկնաւոր զուարթ-
նոցն կը կոչէ, որք սրբոյն Գրիգորի երեւ-
ցան բազմութեամբ զօրաց, ուր Տրդատ
թագաւորն ընդառաջ գնաց սրբոյն, ուսու-
ամ և նոցա անուանը նուիրեց Հրաշակա-
ռոյց եկեղեցին, ըստ այսմ.

, Յայնժամ էարկ ի միաս իւր Կաթու-
ղիկոսն Հայոց (Եկեղի ս. Գ.) շինել իւր
բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն,
որ ի Վաղարշապատ քաղաքի ի վերայ
ճանապարհին, յորում ասեն ընդառաջ
եղեւ թագաւորն Տրդատ սրբոյն Գրիգո-
րի. շինեաց անդ և եկեղեցի մի յանուն
Երկնաւոր զուարթնոցն, որոց երեւեալ
ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութեամբ
երկնաւոր զօրացն, և շինեաց եկեղեցին
բարձր շինուածովք և չքնաղ զարմա-
նալեօք, արժանի ասաւուածային պատ-
ոյն, որում նուիրեացն: Ե. Ճուր ի գետոյն
(Քասաղ) և արկ ի գործ զամենայն ըզ-
վայրու առապարս. տնկեաց այզիս և ծա-
ռապաւնկս. և շուրջանակի պատուարեաց
զբնակութեամն գեղեցկազիր յօրինուա-
ծով բարձր պարսպաւ. ի վառս Աստու-
ծոյ :

Իսկ Յովհաննէս Օ. րդ կաթուղիկոս
պատմաբանը՝ որ Եկեղի ս. յինողէն ամ-
բողջ երկու և կէս դար յետոյ է, կը զրէ
թէ սրբոյն Գրիգորի անուանակոչու-
թեամբ կառոյց այս հրաշակերտ եկեղե-
ցին. և կը յաւելու թէ նշխարս սակերաց

սրբոյն Գրիգորի բաժանելով, ամփոփեց եկեղեցւոյ չորս սեան տակը՝ այս երկնաշյն գանձը գերիշներէն պահպանելու համար։ Եյս պատճառաւ կերեի թէ սուրբ Գրիգոր կոչուեց եկեղեցւոյ անունը ի յետադայից, որպէս ահա։

“Պարձեալ յուսացեալ ի տէր, և ոչ զմտաւ ածեալ զիրթական արշաւանս հինիցն թշնամեաց, զեղեցիկ իմն մոլութեամբ գնէ հիմն մեծ և հրաշալի բազմապայծառ յարկի Տանն Եստուծոյ ըստ անուանակոչութեան սրբոյն Գրիգորի, յանձն առնելով զկատարու մն իմաստութեան շինողին Գրիստոսի, իսկ ի հիմնարկել զաստուածակերտ փարախն հօտին Քրիստոսի, ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսից բաժանեալ գնէ զնըշխարս ոսկերաց սրբոյն Գրիգորի առ ի անշուշտ մնացականութեամբ պահիլ զանձուն երկնաւորի ի գերչաց աւպականաց, և ի պարձանս հաւատոյ քրիստոնէական կարգաց, իսկ զՔրիստոսադրոշմ և զպատուական զլուխն ոչ ի խորոջ, այլ արտաքոյ ի զզրոցի եգեալ՝ գնէ ի գանձարանս աստուածութեանն ի յոյս բարեաց փափագողացն նմա, և ի բժշկութիւն տխտակըլոցն ։”

Եւ որովհետեւ գարաւոր ժամանակներով յառաջ խոնարհած է բոլորովին Ա. Գրիգոր Հինգերորդ եկեղեցի համարուած Ա. աղարշապատ քաղաքի, պատմական քննութեամբ նորա ստորագրութիւնն ամբողջացնենք ի կարգս Եկեղեցեաց Ա. աղարշապատայ։

Զարմանապի բան է արդարեւ, թէ ընդհանուր ազգի Հայրապետական Եթոռն և Քաղաքուղաշտի՝ ուր կաթուղիկէն Այցը

եկեղեցեաց հաստատուն անդը ի Ա. աղարշապատ եղած ժամանակին՝ իւր մենաստանով, սուրբ Հայրապետական Կերսէս Շինող՝ կշնե իւր բնակութեան համար՝ զսուրբն Գրիգոր անջուր, անջրդի տեղ՝ յառապարին. և այն ի՞նչ ժամանակ, Յովհ. Կաթուղիկոսի ասածին պէս՝ “Ոչ զմտաւ ածեալ զիրթական արշաւանս հինից և թշնամեաց,,”

Դիցուք թէ այս հինքն և այս կրթական թշնամիք, որ երկրի ևս տիրող իշխանքն էին, բունեալ էին ի Դիմին, ուր էր Եթոռն Հայրապետական, և նեղութիւն կը կլեն անդ բնակելու, ընդէր ուրեմն և մեծ ու տարապարտ ծախուց տակ կմանէր և այնպիսի հրաշափառ և կեղեցի այնպիս տեղ կշնե էր, վասն զի առապար էր. և ջուրը հեռաւոր տեղէ բերելով՝ ձորերէ և ապառաժ քարերէ կանցուցանէր, ինչպէս ստորեւ կտեսնենք, հարկաւ շուտով ևս պիտի աւերէին ջրանցքը, և առապարու մն բնակութիւնք պիտի անհետանային. ի՞նչ էր պատճառն ուրեմն որ Շինող սուրբ Հայրապետը՝ Հայրապետանուցում չի նստաւ վերստին ի մայրն եկեղեցեաց ի Քաղաքուղաշտի, քան թէ ահազին ծախուց ծանրութեան բեռն շալակեց. եթէ ամսյի էր Կաթուղիկէն Ա. աղարշապատայ, արգէն մեծազումար զրաքը և առձեռն ունէր Շինող Հայրապետն, ընդէր զայն չի նորոգեց, իսկ եմէ շեն էր, ընդէր և զսուրբ Գրիգոր իւր բնակութեան համար շինեց: — Ուերեւ Շինող անուն ժառանգելու:

Վեր ազգային պատմութեանց թերի կողմերն էլ այնպիսի բաներ են, զորոնք

լոելով պատմիչք, հազար ու մէկ կարծեաց մէջ կթողուն զյետագայս:

Պատմութիւնը ցոյց կտայ մեզ երկու առիթ, որով սուրբ հայրապետն Ներսէս “Ի քաղաքի գաշտի,, շինեց զուրբն Գրիգոր. առաջինն էր, որ Առատանդին կայսեր գանձիւքը շինեց՝ որ Ներակլ կայսեր որդին էր. “Եւ ի նաւակատիս, վկայէ որ՝ կոչեաց զթագաւորն Նոռոմոց,,. Մովսէս Կաղա. Գ. ԺԵ:

Երկրորդ առիթն էր, որ սրբոյն Գրիգորի նշխարքը ամփոփեց սուրբ հայրապետը եկեղեցւոյ չորս սեան հաստահեղոյս հիմնեց ներքոյ, զոր բերած էր ի Վաղարշապատ Գրիգոր Մամիկոնեան իշխանը ի ճարդանայ. իսկ գրիստոսաղոցմ և զպատուական գլուխն կվկայէ Յովհ. Կաթուղիկոս թէ ոչ ի խորոջ, այլ արտօքայ ի գղրոցի եղեալ, զնէ ի գանձարան աստուածութեանն . . . և ի բժշկութիւն ախտակրելոցն , :

Եյլ ցաւ է յօյժ և խնդիր միշտ հետաքրքրական և փափագելի, թէ ո՞ւր մընաց յետ ժամանակաց և ի՞նչ եղաւ այս երկնաւոր գանձն, զպատուական գլուխն. որոյ համար և ոչ մի պատմիչք չեն առնել յիշատակութիւն կամ տալ տեղեւ կութիւն ի ծանօթութիւն յետագայից:

Խռնդ զայս, մեր հաւատոյ սուրբ հօր Կնշխարս ոսկերաց,, այսքան դարաւոր ժամանակ բաժանեալ զրուած ի ներքոյ չորից սեանց հաստահեղութից,, եկեղեցին Փրկչական 1000 թուականին, որ հարիւրաւոր տարի յառաջ աւերուած էր ի Տաճկաց ու կործանուած, ի հարկէ օտարի գումարով շինուածքն էլ այսքան միայն կարող էր տեել, որ կը զօշուաէր

թշնամու աչքը. յօրէ անակի մինչև ցոյց սօր բարեպաշտ ու վկայասէր Նայլ գունէ միանգամ ևս միտք չբերեց այս անգին գանձն աստուածային ի խորոց անառի ի ներքոյ չորից սեանցն հաստահեղութից հանել, և փոխանակ գլխոյն՝ զայն զնել արտօքոյ ի գղրոցի ի պարծանս հաւատուած քրիստոնէական կարգաց՝ ի յօյս բորբաց փափագողացն նմա,, — երբ խոպան կործանած է սուրբ Գրիգոր և հողի հաւատար եղած: — Եյտպէս ահա կպատեմք մեր քրիստոնէական սրբութիւնքն և ազգային հնութիւնք:

(Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ-Հ)

ԱԲԷԼ ԱՐՔԵՊՈՂԱԾՈՂՊԱՐ

ԵՐՋԱԿԱՐՑԻՇԱԾԱԿ ՊԱՒԿԱՑ
ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ ՎԵՐԱՑ.

Մօտ օրերս ձեռս անցաւ մի գիրք, որոյ վերնագիրն էր “Պատմութիւն Նայաւատանեաց” սուրբ Եկեղեցւոյ, արարեալ իւ Մ. Վարդապետէ Մուրատեանց յուխտէ սրբոց Յոկորեանց՝ (տպեալ) յԵրուսաղէմ, 1872 ամի,, :

Երկասիրութիւն արդարեւ գովելի և բաւականին կհամապատասխանէ նպատակին, բայց ցաւելով ասեմ, որ հեղինակն անշուշտ պղտորեալ աղքիւրէ է առածիւր ծանօթութիւնները Պուկաս Կաթուղիկոսի մասին, ինչպէս 592 երեսումը կատէ էսպէս:

“Ախմէնին կյաջորդէ Պուկաս Կարնեցի (1780), որոյ Կաթուղիկոսութեան ժամանակ Պօլսոյ Պատրիարքն էր Օքաքարիա,